ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը եւ Ղազախստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը, այսուհետ՝ Կողմեր,

ուշադրության առնելով ագրոարդյունաբերության համալիրի բնագավառում փոխշահավետ համագործակցությունը զարգացնելու եւ խորացնելու ձգտումը շուկայական հարաբերությունների հիմքի վրա երկու պետություններում կատարվող տնտեսական բարեփոխումների պայմաններում,

հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության եւ Ղազախստանի Հանրապետության միջեւ պատմականորեն ձեւավորված տնտեսական եւ գիտատեխնիկական կապերը,

գիտակցելով գյուղատնտեսության առաջատար դերը տնտեսության զարգացման եւ պարենամթերքի անվտանգության ապահովման գործում,

ընդունելով փորձի փոխանակման եւ համագործակցության անհրաժեշտությունը բոլոր մակարդակներում Կողմերի պետությունների միջեւ համագործակցության ամրապնդման համար,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Կողմերն իրականացնում են համագործակցություն գյուղատնտեսության բնագավառում սույն Համաձայնագրին եւ Կողմերի պետությունների ազգային օրենսդրություններին համապատասխան:

Հոդված 2

Սույն Համաձայնագրով նախատեսվող համագործակցությունն իրականացվում է հետեւյալ հիմնական ուղղություններով.

1. բուսաբուծություն, այդ թվում՝ գյուղատնտեսական մշակաբույսերի սերմնաբուծություն.
2. անասնապահություն, այդ թվում՝ տոհմային գործ.
3. անասնաբուժություն.
4. սննդի եւ վերամշակման ճյուղեր, այդ թվում՝ սննդամթերքի արտադրության եւ վերամշակման ձեռնարկությունների արդիականացում.
5. տնտեսավարման նոր ձեւերի զարգացում, ֆերմերային տնտեսությունների, միությունների եւ բաժնետիրական ընկերությունների կազմակերպում եւ կայացում.
6. ագրոարդյունաբերության համալիրի բնագավառում բարեփոխումների եւ սեփականաշնորհման իրականացման գործում խորհրդատվություններ եւ աջակցություն:

Այլ ուղղություններով համագործակցություն կարող է իրականացվել Կողմերի փոխադարձ պայմանավորվածությամբ:

Հոդված 3

Կողմերն աջակցում են Հայաստանի Հանրապետության եւ Ղազախստանի Հանրապետության տնտեսավարող սուբյեկտների միջեւ ուղիղ կապերի հաստատման համար բարենպաստ պայմանների ստեղծմանը գյուղատնտեսական մթերքների եւ ագրոարդյունաբերության համալիրի համար նյութատեխնիկական միջոցների մատակարարումների ուղղությամբ:

Հոդված 4

Սույն Համաձայնագրի շրջանակներում համագործակցությունն իրականացվում է հետեւյալ ձեւերով.

1. գիտատեխնիկական եւ տնտեսական տեղեկատվության, գիտական հետազոտությունների արդյունքների փոխանակում, գիտաժողովների, սեմինարների եւ ցուցահանդեսների անցկացում.

2. սերմերի նմուշների, գյուղատնտեսական կենդանիների, տնկանյութի, մեքենաների եւ սարքավորումների փոխանակում՝ փորձարկումներ իրականացնելու համար.

3. շրջաններում եւ ամբողջ հանրապետությունում անասնահամաճարակային իրավիճակի վերաբերյալ տեղեկատվության փոխանակում, կենդանիների եւ թռչունների առավել վտանգավոր հիվանդությունների ախտորոշում.

4. գիտատեխնիկական եւ արտադրական համագործակցություն, համատեղ կազմակերպությունների, ձեռնարկությունների, բաժնետիրական ընկերությունների ստեղծում:

Համագործակցության այլ ձեւեր, որոնք առնչվում են սույն Համաձայնագրին, կարող են իրականացվել Կողմերի փոխադարձ պայմանավորվածությամբ:

Հոդված 5

Սերմերի, տեխնիկայի նմուշների, կենդանիների եւ այլ արտադրանքի, ինչպես նաեւ հրապարակված տեղեկատվության փոխանակումն իրականացվում է մտավոր սեփականության ոլորտում Կողմերի ազգային օրենսդրությանը եւ միջազգային այն պայմանագրերին համապատասխան, որոնց մասնակից են նրանք:

Հոդված 6

Սույն Համաձայնագրի դրույթների արդյունավետ իրականացման նպատակով Կողմերն անցկացնում են կանոնավոր հանդիպումներ լիազորված ներկայացուցիչների, ինչպես նաեւ իրենց ագրոարդյունաբերության համալիրի տնտեսավարող սուբյեկտների ղեկավարների եւ մասնագետների մակարդակով՝ համատեղ ծրագրերի եւ նախագծերի իրականացման համակարգման, փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ խորհրդակցությունների համար:

Հոդված 7

Կողմերն ինքնուրույն հոգում են սույն Համաձայնագրի կատարման ընթացքում առաջացող ծախսերն իրենց պետությունների ազգային օրենսդրություններով նախատեսված միջոցների սահմաններում, եթե յուրաքանչյուր կոնկրետ դեպքում այլ կարգ չի նախատեսվում:

Հոդված 8

Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման կամ կիրառման վերաբերյալ վեճեր առաջանալու դեպքում Կողմերը դրանք լուծում են բանակցությունների եւ խորհրդակցությունների միջոցով:

Հոդված 9

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին հայկական կողմի գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով ղազախական կողմի ստանալու օրվանից:

Սույն Համաձայնագիրը դադարում է գործել Կողմերից մեկի՝ դրա գործողությունը

դադարեցնելու մտադրության մասին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով մյուս Կողմի ստանալու օրվանից վեց ամիսը լրանալուն պես:

Հոդված 10

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ եւ լրացումներ՝ ձեւակերպվող առանձին արձանագրություններով, որոնք հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը եւ ուժի մեջ են մտնում սույն Համաձայնագրի 9-րդ հոդվածին համապատասխան:

Կատարված է Երեւանում 2009 թվականի մայիսի 15-ին, երկու օրինակով. հայերեն, ղազախերեն եւ ռուսերեն, ընդ որում՝ բոլոր տեքստերն ունեն նույն իրավաբանական ուժը:

Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման ժամանակ տարաձայնություններ առաջանալու դեպքում նախապատվությունը կտրվի ռուսերեն տեքստին:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2009 թ. հուլիսի 27-ին: